Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցման համար ներկայացված Հայարփի Արթուրի Զարգարյանի «Երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էությունը և դրա կենսագործման հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է երեխայի ազատ տեղաշարժվելու և երեխայի բնակության վայրի իրավունքների, դրանց կենսագործման հիմնահարցերի ուսումնասիրությանն ու վերլուծությանը:

Ատենախոսը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ որպես իրավունքի ինքնուրույն տեսակ ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա է դարձել երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Կարևորելով երեխայի՝ որպես հասարակության ինքնուրույն անդամի դերակատարությունը, երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման առաքելության հարցում պետության ստանձնած պարտավորությունները՝ հեղինակի կողմից հիմնավորվել է երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ որպես ինքնուրույն իրավունք ամրագրելու անհրաժեշտությունը, և երեխայի բնակության վայրի իրավունքից տարանջատելու կարևորությունը:

Ըստ էության կարելի է փաստել, որ հեղինակը կատարել է երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի համապարփակ, խորը և համակողմանի գիտագործնական վերլուծություն: Ուսումնասիրել է անհրաժեշտ քանակությամբ տեսական գրականություն, ինչպես նաև տարբեր երկրների օրենսդրական ակտեր: Այս համատեքստում հեղինակը անդրադարձել է Հայաստանում երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի՝ որպես ինքնուրույն իրավունքի տեսակի նախկինում ուսումնասիրությունների բացակայությանը, հայրենական գրականության մեջ երեխայի ազատ տեղաշարժվելու և բնակության վայրի իրավունքների միախառնված լինելուն: Արդյունքում աշխատանքի 34-35-րդ էջերում հեղինակն առաջարկել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում «Երեխայի հիմնական իրավունքները և դրանց երաշխիքները» վերտառությամբ Գլուխ II-ը լրացնել« Երեխայի ազատ տեղաշարժվելու

իրավունքը» վերտառությամբ առանձին հոդվածով՝ առաջարկելով նաև հասկացությունը:

Հեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել նաև երեխայի լավագույն շահը՝ երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքում և որպես լավագույն շահը բացահայտելու միջոց՝ դիտարկել է երեխայի կարծիքը արտահայտելու և լսված լինելու իրավունքը: Անդրադառնալով հիշյալ իրավունքին՝ մանրամասն ներկայացրել է երեխայի կարծիք արտահայտելու և երեխայի համաձայնությունը ստանալու օրենսդրական ձևակերպումների տարբերությունները, պրակտիկայում այդ հասկացությունների մեկնաբանությունները, 53-55-րդ էջերում կատարվել է համադրված վերլուծություն «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի ՄԱԿ կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների հետ և գիտագործնական մոտեցումներն ամփոփել է օրենսդրական փոփոխության առաջարկում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրությունը սահմանելով աշխատանքի 61-րդ էջում:

Այնուհետև, հեղինակը քննարկման առակա է դարձրել երեխայի բնակության վայրի իրավունքը՝ վերլուծելով այն որպես ինքնուրույն իրավունք, տարանջատելով երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքից, միևնույն ժամանակ, դիտարկելով այն որպես երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի բաղկացուցիչ մաս: Այս հարցի կապակցությամբ նույնպես հեղինակը ուսումնասիրել է տարբեր տեսաբանների կարծիքներ և տարբեր երկրներում առկա մոտեցումներ, և դրանք համադրելով՝ առաջարկել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ «Երեխայի բնակության վայրը» վերտառությամբ հոդվածով՝ առաջարկելով դրա սահմանումը (էջ 76):

Ինչպես երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի դեպքում, այստեղ նույնպես հեղինակն անդրադարձել է երեխայի լավագույն շահին՝ վերլուծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածները, առաջարկելով դրանցում կատարել խմբագրական փոփոխություններ, ինչպես նաև լրացնել ՀՀ ընտանեկան օրենսգիրքը 54.1-ին հոդվածով՝ «Երեխայի բնակության վայրը որոշելու կարգը» վերտառությամբ՝ տալով դրա սահմանումը (էջեր 88-90):

Աշխատանքի արժանիքներից է ոչ միայն դրա հագեցվածությունը օրենսդրական փոփոխությունների առաջարկներով, այլև մի շարք նորամուծությունները, որոնք նախկինում չեն դարձել գիտական մակարդակում քննարկման առարկա, օրինակ՝ երեխայի բնակության վայրը որոշելու մասին ծնողների միջև կնքվող համաձայնագրի ձևը, խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի՝ այդ համաձայնագրի կնքմանը պարտադիր մասնակցությունը և այն ստորագրելու անհրաժեշտությունը (էջ 86), սանկցիայի սահմանումն այն դեպքերում, երբ ծնողները կամ նրանցից մեկը կամ այլ օրինական ներկայացուցիչ չի կատարում դատարանի որոշումը՝ երեխայի բնակության վայրը սահմանելու մասին (էջեր 94-95) և այլն:

Հեղինակը ատենախոսության հետագա շարադրանքում անդրադարձել է երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներին՝ «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 1980 թվականի կոնվենցիայի համատեքստում՝ երեխային ապօրինի տեղափոխելը կամ անօրինական պահելը դիտարկելով որպես իրավունքի սահմանափակման դրսևորում: Հեղինակը

վերլուծել է երեխային տեղափոխելու կամ պահելու հասկացությունը, երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներում կրկին քննարկման առարկա է դարձել երեխայի լավագույն շահը՝ ներկայացնելով նաև միջազգային պրակտիկ փորձը՝ բացահայտելով ներպետական և օտարերկրյա դատարանների կողմից երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտումները:

Արդյունքում հեղինակը կատարել է կարևոր գիտա-պրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների արժեքավոր առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, յոթ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Բացի այդ հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները շատ արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ուսումնասիրված ատենախոսությունը, զերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, որոնք կայանում են հետևյալում.

1. Կարծում ենք, որ երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքը երեխայի բնակության վայրի իրավունքից տարանջատելու առաջրկն իրենում որոշակի ռիսկեր է պարունակում: Մասնավորապես, որպես առանձին իրավունքներ միմյանցից անջատ մեկնաբանության և հետագայում նման մեկնաբանությամբ այդ իրավունքների առանձին-առանձին իրավակիրառման դեպքում երեխայի բնակության վայրի որոշման իրավական նպատակը և դրանով պայմանավորված կայունությունը կարող է խաթարվել: Երեխաները կարող են բնակության որոշված վայրից ազատ տեղաշարժվելու ինքնուրույն իրավունքի իրացման արդյունքում փոփոխել իրենց բնակության վայրը, որը կարող է հանգեցնել բնակության վայրի որոշման մասին դատական ակտի պահանջների ու նպատակների անհարկի խախտման: Այս իրավիճակը հաճախ կարող է առավել ցայտուն արտահայտվել այն դեպքերում, երբ ծնողները բնակվում են տարբեր երկրներում, և ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման արդյունքում երեխան կարող է տևական ժամանակ հայտնվել այլ երկրում՝ հակասելով երեխայի բնակության վայրի արտադատական կամ դատական կարգով որոշված պայմանին: Այս առումով, մի կողմից՝ երեխայի բնակության վայրը որոշելու, մյուս կողմից այդ որոշմանը հակասող ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման հարցերում կամ վեճերում երեխայի լավագույն շահը բացահայտելը կարող է խնդրահարույց լինել, արդյունքում՝ ազատ տեղաշարժվելու

իրավունքը բնակության վայրի իրավունքից գերակա իրավունք համարելու մոտեցումը կարող է խաթարել ընտանեկան հարաբերությունների կայունությունը:

2. Հեղինակի կողմից աշխատանքի 76-րդ էջում ներկայացվել է առաջարկ՝ օրենսդրության մեջ ներմուծել «երեխայի բնակության վայր» եզրույթը՝ այն դիտարկելով որպես առանձին իրավունք, մինչդեռ պաշտպանության ներկայացված 2-րդ և 3-րդ դրույթների ներքո արտացոլված դատողությունները, մեր կարծիքով, բավականաչափ հիմնավորված չեն:

Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ երեխայի բնակելի տարածության օգտագործման իրավունքն արդեն իսկ ամրագրված է և դրանով երաշխավորված է բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխայի՝ այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունքը:

Հեղինակը աշխատանքի 22-23-րդ էջերում նշել է, որ «ապրելու իրավունք» եզրույթն ըստ էության վերաբերում է կյանքի իրավունքին, որն իր հերթին չի նույնանում բնակվելու իրավունքի հետ, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համատեքստում «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով «ապրելու իրավունքը» երաշխավորվում է «անկախ իր բնակության վայրից» եզրույթի կիրառման միջոցով, և ակնհայտ է, որ «ապրելու իրավունք» ասելով՝ օրենսդիրն ի նկատի է ունեցել ոչ թե կյանքի իրավունքը, այլ՝ բնակության վայրի իրավունքը: Նույն եզրահանգման կարող ենք գալ նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 64-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունից, որտեղ էլ օգտագործվում է «բնակելի տարածության օգտագործման իրավունք» եզրույթը, որը նույն է, ինչ բնակության վայրի իրավունքը, քանի որ վերջինս կյանքի է կոչվում հենց բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրացման միջոցով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ «Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է...» արտահայտության միջոցով ևս ընդգծվում է երեխայի ապրելու իրավունքը, որը բնակության վայրի իրավունքն է:

Պրակտիկայում «ապրելու իրավունք» և «բնակելի տարածության օգտագործման իրավունք» արտահայտությունները մեկնաբանվում են որպես երեխայի բնակության վայրի իրավունքներ, ինչը նշանակում է, որ այս իրավունքի՝ որպես առանձին իրավունքի օրենսդրական ամրագրումն ու սահմանումը որպես կատարված հետազոտությունների խնդիրների լուծմանն ու նպատակների իրագործման լրացուցիչ միջոց բավականաչափ հիմնավորված չէ:

3. Պաշտպանության ներկայացված 6-րդ դրույթի ներքո արտացոլված դատողությունները առաջարկվող որոշ փոփոխությունների մասով բավարար չափով հիմնավորված չեն:

Այսպես, առաջարկվող նոր՝ «Երեխայի բնակության վայրը որոշելու կարգը» վերտառությամբ պայմանական 54.1-ին հոդվածի 3-րդ մասի որոշ կարգավորումներ, որոնք սահմանում են երեխաների բնակության վայրի որոշման կանոնները, արդեն իսկ առկա են նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում, որը սահմանում է ծնողների՝ միմյանցից

առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնությամբ որոշելը: Այս առումով առանձին կարգ սահմանելու անհրաժեշտությունն առնվազն ունի քննարկման և բացահայտման կարիք:

Բացի այդ առաջարկվող հոդվածի 3-րդ մասում պարտադիր պայման է համարվել երեխայի բնակության վայրի որոշման շուրջ ծնողների համաձայնության գրավոր ձևը, որը կարող է որոշակիորեն սահմանափակել ծնողների իրավունքներն ավելի ճկուն լուծել երեխայի բնակության վայրի հետ կապված վեճը: Այդպիսի իմպերատիվ կարգավորում նախատեսված չէ նաև նույնպիսի հարաբերություններ կարգավորող ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով: Բացի այդ, ծնողների կողմից արտադատական կարգով երեխայի բնակության վայրի որոշման հարցի լուծումը, մեր կարծիքով, սահմանափակում է ծնողների դատական պաշտպանության իրավունքը:

Այս ամենով հանդերձ, պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հայարփի Զարգարյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայարփի Արթուրի Զարգարյանի «Երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի էությունը և դրա կենսագործման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք» մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Վ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

05.04.2023թ.

«Վ. Ավետիսյանի ստորագրության իսկությունը հաստատվում է»
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ